# ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԴԱՄԱՍԿԻՆՈՍԻ ԽՈՍՔԸ

Յուրաքանչյուր Եկեղեցու Առաջնորդի ընտրությունն ու գահակալությունը եկեղեցական գիտակցության մեջ միշտ եղել և մնում է մեծագույն իրադարձություն՝ իր եկեղեցական մարմնի ձևավորման և գործունեության համար: Խնդրո առարկա իրադարձությունն էլ միշտ եղել և մնում է բացառիկ անցք աշխարհի բոլոր Եկեղեցիների համար, որոնք եկեղեցական ավանդության կարգի համաձայն մասնակից են դառնում այդ ուրախալի իրողությանը:

Որպես Տիեզերական Պատրիարք Նորին Սրբազնություն Բարդուղիմեոս Ա-ի և Կոստանդնուպոլսո Սուրբ և Մեծ Եկեղեցու ներկայացուցիչ, մասնակից եմ դառնում Հայոց Եկեղեցու Առաջնորդի՝ Գարեգին Սրբազնագույն Կաթողիկոս Ներսիսյանի ընտրության և գահակալության Ձեր ուրախությանը՝ բերելով Տիեզերական Սրբազնագույն Պատրիարքի եղբայրական ողջույնը և հայոց ազգին երկար փարիներ արգասավոր սպասավորություն մաղթելու ի խորոց սրտի բարեմաղթանքները, ազգի, որ քանի դար ի վեր ներշնչվում է հավատի Ավետարանի կոչով և լուսավորվում ճառագայթմամբ, «յուսոյ որ ի մէջ մեր»:

Վեհափառ Կաթողիկոս Հայոց: Այսօր բարձրանում եք Էջմիածնի Կաթողիկոսության փառավոր գահին, որը պարծենում է հայոց պատմական ազգի մեջ քրիստոնեական հավատքի իր առաքելական ավանդով և պաշտպանվում այստեղ՝ (Էջմիածնում) պահվող Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջով: Պատիվը շատ մեծ է, ինչպես շատ մեծ է և եկեղեցական սպասավորության պատասխանատվությունը, որն իր վրա է նա վերցնում՝ ամբողջ աշխարհի հայերի այս սուրբ կենտրոնում:

Ձեր սպասավորությունը շատ ավելի դժվարին է դառնում ոչ միայն որովհետև Ձեր վրա եք վերցնում հայոց ազգի ազգային միասնության և հզոր կապի հզոր հզոր բազկի պատասխանատվությունը, այլև որովհետև այս համադրական առաքելության մեջ ժառանգում եք հայոց հզոր մեծ առաջնորդներին՝ Գրիգոր Լուսավորչին, Սահակ Մեծին (388-439), Հովսեփ Ա Նախապակին (441-454), Հովհաննես Մանդակունուն (478-490), Հովհաննես Գ Իմաստասերին (717-729), Զաքարիա Ա Ձագեցուն (855-877), Ներսես Դ-ին (1166-1173) և հայոց բոլոր մեծ Կաթողիկոսներին՝ մինչև Ձեր երջանկահիշատակ նախորդը՝ Գարեգին Սարգսյան Կաթողիկոսը: Նրանց սպասավորությունը Ձեր սպասավորության համար վառ օրինակ է, որպեսզի պայծառանա հայոց ազգը, իր Եկեղեցու համար հպարտ զգա:

Սրբազնագույն Կաթողիկոս Հայոց՝ Աստված Ձեզ օժտել է հզոր բացառիկ շնորհներով, Ձեր ժողովուրդն իր պատմական ճակատագրի անցումային ժամանակաշրջանում, ի դեմս Ձեր սուրբ անձի, ճանաչեց հզոր Առաջնորդին: Հեթանոսաց Առաքյալ Պողոսը իրեն բնորոշ կատարելությամբ նկարագրեց եկեղեցական առաջնորդի առաքելական փիպարը. «Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ: Արդ խնդիր է ի մէջ հազարապետաց եթէ ոք հաւատարիմ գտցի» (Ա Կորն. Դ 1-2):

Աստուծո խորհրդոց հավատարիմ հազարապետը Դուք եք և Քրիստոսի հավատարիմ պաշտոնյան՝ հայոց բարեպաշտ ազգի սպասավորության մեջ: Դեռ պատանեկան հասակից Սուրբ Գրոց հանդեպ Ձեր ունեցած սերը, Ձեր փայլուն ուսումնառությունը Վիեննայի (1971-1974) և Բոննի (1975-1978) համալսարանների Աստվածաբանական ֆակուլտետներում, ինչպես և Զագորսկի ռուսական Աստվածաբանական Ակադեմիայում, գերազանց ձևով ներդաշնակվեցին Արարատյան թեմը հովվելու ընթացքում ձեռք բերած, ինչպես և վարչական պատասխանատվությամբ Հայոց Վեհափառ Հայրապետների՝ Ձեր պայծառ նախորդների՝ Վազգեն Ա-ի և Գարեգին Ա-ի փոխանորդը լինելու փորձառության հետ: Հենց այդ բոլորը հիմք հանդիսացան, որպեսզի եկեղեցական մարմինը բացարձակ մեծամասնությամբ այսօր Ձե՛ր անձի մեջ ճանաչի Հայոց Առաքելական Եկեղեցու արժանավոր Առաջնորդին:

Հայոց ազգի համար Դուք եք Քրիստոսի հավատարիմ պաշտոնյան և Աստուծո խորհրդոց հավատարիմ հազարապետը: Ի խորոց սրտի մաղթում եմ Ձեզ մեծախոհ հովվություն և արգասավոր սպասավորություն՝ ի պայծառություն Հայոց Եկեղեցու և ազգի:

## ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ Բ-Ի ԽՈՍՔԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵՈԴՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՈՂՄԻՑ

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ձերդ Սրբություն,

Հանուն Վրաց Ուղղափառ Եկեղեցու ի սրտե ողջունում և շնորհավորում ենք Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսական դարավոր գահին բազմելու առիթով: Այսօր Վրաստանի հավատացյալները ցնծում են Հայաստանի հավատացյալների հետ և Ձեզ հետ մեծ հույսեր կապում:

Տիրոջից շնորհված մեծ պատիվ է լինել Եկեղեցու առաջնորդ, սակայն միաժամանակ չափազանց ծանր Խաչ է և մեծ պատասխանատվություն հաչս Աստծու և ժողովրդի:

Մենք շատ ծանր ու հակասական ժամանակներում ենք ապրում. այսօր փորձության են մատնված մեր հավատքն ու սերը: Բոլորս ուրախ ենք, որ մեր հինավուրց պետությունները վերանվաճել են իրենց անկախությունը: Սակայն պետք է հիշենք նաև այն, որ ժողովրդավարության զարգացմանը համընթաց պարտավոր ենք պահպանել մեր ժողովուրդներին հատուկ բարձր բարոյականությունը, ինքնօրինակ մշակույթը և մեր ավանդությունները: Եվ այս առումով մեծ պատասխանատվություն են կրում եկեղեցականները: Ես վստահ եմ, որ Հայոս և Քարթլոս եղբայրների հետնորդներն Աստծու օգնականությամբ ժամանակի այս փորձությանը ևս կդիմագրավեն:

Ձերդ Սրբություն, ևս մեկ անգամ շնորհավորում ենք Ձեզ, Հայ Առաքելական Եկեղեցուն և համայն հայ ժողովրդին՝ պատմական այս իրադարձության առիթով, և հույս հայտնում, որ մեր ժողովուրդների միջև շարունակվող բարեկամական վաղեմի հարաբերությունները առավել կխորանան ու կամրապնդվեն:

Եղբայր հայ ժողովրդին ցանկանում ենք խաղաղություն և բարգավաճում, իսկ Ձերդ Սրբությանը՝ քաջառողջություն և երջանիկ կյանք, որպեսզի Ձեր վեհ ծառայությունը հաջողությամբ առլեցուն լինի:

Սուրբ Գրիգորը՝ Հայաստանի Լուսավորիչը, թող Ձեզ օգնական և հովանավոր լինի:

Եղբայրական սիրով ողջագուրում եմ Ձեզ:

## ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԲԻՇՈՅԻ ԽՈՍՔԸ

*«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:*

Թույլ տվեք Ձեզ՝ Արարատյան Նախամեծար Աթոռի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը, փոխանցել Ալեքսանդրիայի Պատրիարք Շենուդա Գ Պապի շնորհավորանքները Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի գահակալության առթիվ, իբրև Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների և Գրիգոր Լուսավորչի հաջորդի: Այսօր Երկնավոր Տերը դարմանում է հայ ժողովրդի վերքերը ապիվածընտիր Հայրապետի օծմամբ:

Բոլորիս քաջածանոթ է Գարեգին Վեհափառի տակավին առաջնորդական շրջանի եռանդուն գործունեությունը, որում ցոլանում է նրա՝ իբրև խոնարհ սրտով Աստծուն ապավինողի, Իր ժողովրդին սիրողի, թույլին, հիվանդին, կարիքավորին նեցուկ լինողի, առաքելական ուղղափառ ճշմարիտ հավատքի և ավանդության գանձերը նախանձախնդրորեն պահպանողի պատկերը: Մեր աղոթքները վերառաքեցինք առ Աստված, որպեսզի Սուրբ Հոգին երկնային շնորհներով լցնի Վեհափառի սիրտը՝ ի բարօրություն Իր ժողովրդի և ի փառս ողջ քրիստոնեության:

Մենք միշտ պետք է գործակցենք Իր հետ՝ Տիրոջից մեզ շնորհված մեր ողջ կարողությամբ: Իբրև պատվիրակներ Նորին Սրբություն Շենուդա Գ Պապի, Գերաշնորհ Յոհանիս եպիսկոպոսը և ես Ձեզ ենք բերում այն ողջ սերն ու գնահատանքը, որ Նա տածում է Հայաստանի հանդեպ, որպես ազգի՝ իր փառավոր պատմության մեջ, որպես Եկեղեցու, որը պահել է և կշարունակի պահպանել ճշմարիտ ուղղափառ հավատքը՝ ձեռք ձեռքի Ալեքսանդրիայի Եկեղեցու հետ:

Մեր՝ Հայաստան ժամանելու պահին Նորին Սրբությունը Եգիպտոսում Աստծու օգնությամբ աղոթում էր Հայաստանի բարօրության ու առաջընթացի համար:

Փառք Աստծու հավիտյանս. Ամեն:

## ՔԵՆԹԸՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՐՋ ՔԵՐԻԻ ԽՈՍՔԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԵՅՎԻԴ ՈՒԻԼՔՈՔՍԻ ԿՈՂՄԻՑ

Երկար փարիներ անգլիկան համայնքը բարիդրացիական հարաբերությունների մեջ է եղել Հայ Ուղղափառ Սուրբ Եկեղեցու հետ: Համոզված եմ, որ այս հարաբերությունները կշարունակվեն ու է՛լ ավելի կամրապնդվեն Ձեր գահակալության օրոք:

Հիշում եմ փարիներ առաջ իմ առաջին այցելությունը Հայաստան և աղոթում Ձեր Եկեղեցու և ժողովրդի համար, քանզի, իբրև աշխարհի առաջին քրիստոնյա երկիր, պատրաստվում եք տոնախմբել Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը:

Ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ շնորհավորանքներս ուղղելու Ձերդ Սրբությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: